

րութիւնը պարտաւոր է բառնալ այդ հարստահարութիւններն, որպէս զի հարկ չմնար *թաքրիք* գրելու:

Եթէ թուրք կառավարութիւնն *Հայաստանն* եւ *Թաքրիքը* բառնալու տեղ հարստահարութիւններն բառնալու ջանար՝ անելի մեծ ծառայութիւններ մատուցած կը լինէր իւր երկրին: Սակայն մեր հաւատքն այն է, որ հարստահարութիւնները չեն վերնար, մինչեւ որ չվերնան... քիւրդերը...:

16 Սեպտեմբեր

Արհեստասիրաց Ընկերութիւնն Մշոյ Ս. Առաքելոց վանուց մեջ երկրագործական վարժարան մը պիտի բանայ մօտերս:

Քիչ բացառութեամբ վանքերն մինչեւ այսօր մէյմէկ ծուլարաններ են, ուր արժանապատիւ միաբանները կ'ուտեն, կ'իմեն եւ կ'պառնան. որպէս թէ Աւետարան ըսած լինէր իրենց. գնացէ՛ք այսուհետեւ կերէ՛ք, խմեցէ՛ք եւ պառնեցէ՛ք:

Ուրախ ենք, որ Արհեստասիրաց Ընկերութիւնն այս վանքերէն մին առնելով՝ բարենպաստակ գործի մը պիտի յատկացնէ զայն: Ո՞ր էր թէ վանօրէից խորհուրդն միւս վանքերն ալ միաբաններուն ձեռքէն առնէր եւ աշխարհականներուն վարձու տար, որպէս զի այդ վանքերէն ալ քիչ մը օգուտ քաղէր ազգը:

Միաբաններուն գալով՝ անոնց համար անկելանոց մը շինելու է տեղ մը, որ երթան մեջը պառնին եւ բնաւ չելնեն: Հերիք է այսչափ տարիներէ ի վեր ազգին ծառայեցին, քիչ մ'ալ հանգիստ ընեն...:

17 Սեպտեմբեր

«Հեղինակին միւս գործերը»:

Գիտէ՞ք որոնք են հեղինակին միւս գործերը:

Համբերեցէք որ ըսեմ:

Քանի մը ատենէ ի վեր սովորութիւն դարձած է մայրաքաղաքիս մէջ, որ տասնեւեց երեսներէ բաղկացեալ տետրակ մը հրատարակողն՝ տետրակին անունը տետրակին թէ՛ ճակատին վրայ կը գրէ եւ թէ ետեւի կողմը. որով մէկ աշխատասիրութիւն մը երկու աշխատասիրութիւն եղած կ'ըլլայ: Կարդացողը կ'ուզէ գիտնալ, թէ հեղինակին միւս գործերն ո՞րոնք են, եւ շուտ մը կը համոզուի թէ հեղինակին միւս գործն այն հրատարակութիւնն է զոր կկարդայ: